ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 օգոստոսի 2013թ. թիվ 140-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՍՏԱՆՁՆՄԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013թ. փետրվարի 21-ի թիվ 54-Ա որոշման՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. 2013թ. նոյեմբերի 17-ին նշանակել Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի ղեկավարի հերթական ընտրություն և այդ համայնքի նորընտիր ղեկավարի կողմից լիազորության ստանձնման ժամկետ սահմանել 2013 թվականի դեկտեմբերի 9-ը:

2. Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝ սույն որոշման մասին ծանուցել Մարգահովիտ համայնքի ներկայիս և նորընտիր տեղական ինքնակառավարման մարմիններին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. օգոստոսի 20
ք.Վանաձոր